ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 26 >> մայիսի 2016թ. N 57

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2 N 73 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և երրորդ մասով.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի օգոստոսի 28-ի <<Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով նոր հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N76 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 73 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) կարգադրության հավելվածում <<Ծ. Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ>> բառերը փոխարինել <<Ա. Բեգլարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ>> բառերով.

2) կարգադրության հավելվածում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ <<Ա. Պողոսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջության պետական տեսչության Արմավիրի մարզային կենտրոնի բժիշկ համաճարակաբան>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ